

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ “ՆՈՐ ՕՐ”, Ի

ՆԱՍԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ՊԵՏԵՐ Ի ՈՒՂՂԱԿԱՆ ԱՄ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լուսարկ
ԳԱԶԻՐԷ

Նամակատուփ ԹԻՒ 117

DIRECTION DU JOURNAL
NOR-OR
CAIRE, B. P. N° 117

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԼՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս	
Գանձիքի համար	Տարեկան 50
» »	Վեցամսեայ 30
Շրջակայից »	Տարեկան 60
» »	Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՍԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՈՒՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՍԱՐ	
Տարեկան	Րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԻՒԿ Է
ԵՒ ԲՂԹԱՏԱՐԻ ՇԱԽԵԸ
ԹԵՐԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻ ՎՐԱՅ Է:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»-ի վարչութեան հետեւալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրատարակուի Պատ. բաժանորդներուն ուղարկութիւնը:

Ներկայ ՕԳՈՍՏՈՍԻ 11-էն ՍԿՍԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ԲԱՐՏՈՒՎԱՐՆԵՐԿԱԹԱՅՈՒՑԻՑ ՏԻԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ-ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԸՆՎԱԻԵՐ ԿՐ ՆԿԱՏՈՒԻՆ:

Ինչպէս որ թերթիս այս օրուան թիւից մէջ գրուած է, հինգշաբթի առաւօտ, Գահիրէի Մուսթի բեկեղեցւոյ մէջ Ռ. մեյքերթօ թագաւորին հոգեհանգստեան հանգիստուոր պատարագ մատուցուեցաւ՝ ի ներկայութեան եգիպտական կրօնավարութեան ու բոլոր միջազգային ներկայացուցիչներուն:

«Նոր Օր»-ի վարչութեան Գարտուղարներ-կայացուցիչն ընկերակցութեամբ «Նոր Օր»-ի խմբագրապետին ներկայ գտնուելով սոյն պաշտօնական արարողութեան, ցաւակցութեան արտայայտութիւնէ վերջ՝ վարչութեան կողմէն Իտալական Հիւպատոսարանը ներկայից ֆրանսերէն ուղերձ մը, որուն թարգմանութիւնն է հետեւեալը:

Վստմաշուք Տէ՛ր,

Հայ սղօր միահամուռ սրտմտութեամբ կը բողոքէ զազիր եղեանագործութեան դէմ որ սուրի մէջ կը թաղէ Իտալիոյ արքայական գերդաստանն ու բովանդակ տեղեկքը:

«Նոր Օր» լրագիրը, Հայ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան օրկան, եւ այս ընդհանուր սրտմտութեան թարգման, իր սգաւոր սրտակներուն մէջ կ'ողբայ Իտալիոյ Վեհապետին այնքան աւսպատելի մանր, առ որ բովանդակ Հայերը պիտի պահեն անմտաց յիշատակ մ'երախտագիտութեան, այն արի պաշտպանութեան համար զոր բոլոր Իտալիա ձեռք առած էր իրենց հարստանարուած ժողովուրդին հանդէպ:

Այս ցաւակցական համակրութեանց միջոցին պարտականութիւն կ'զգայ ինչպէս թեմամբ շնորհաւորել Նոր Վեհապետին թագաւոր հռչակումը, եւ իրեն կը մագթէ բարեբաւակ թագաւորութիւն մը:

(Ստորագր.)

Առ Նորին Վսեմութիւն
Ն. Վ. Պ. Թուճիկի

Դիւանագիտական գործակալ Իտալիոյ
Աստ

ԳԱԶԻՐԷԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԸ

Ե Ի

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Շար. նախորդ թիւէն)

Երբ Հոգաբարձութիւնն ըլլայ կամայական ու Տնօրէնը կամակատար. երբ առաջինը կ'արձակէ հրամաններ, զորս վերջինը կ'ընդունի իր-

բեւ պատգամ, արդար ըլլան թէ անարգար, եւ կը գործադրէ, առանց փոքրիկ առարկութեան կամ գիտողութեան. երբ Գաղ. ժողովը սանձարձակ աղաւթութիւն կը շնորհէ իր կարգած հոգաբարձութեան, ու այս վերջինը կորստաբեր յայտագիր մը կը նետէ Տնօրէնի երեսին, անոր գործադրութիւնը հրամայելով. երբ, վերջապէս, ուսուցչական մարմինը կը տառապի անհամբարաշտութեան արտէն. այն ատեն Ազգ. վարժարանի սեմէն ներս կը խուժեն Խպտիներն ու Ֆէլլահները, իրենց առհասարակ անհոգութիւններով, միջազգային կրթութեան ու եգիպտական կառավարութեան կրթական ծրագրին վրայ ձեռած դասախօսութեան մէջմտովը . . . :

Ամեն օր արաբերէն ու ժամերով արաբերէն. օրերով անգլիերէն ու յաճախ ֆրանսերէն, երբեմն ալ հայերէն, շարաքը 3 կամ 6 ժամ միայն, այն ալ զրարար — Տէ՛ր լալի, լալ, ստորագրի — անվերջանալի և անտանելի վերլուծումով, հոգ չէ թէ գրարարի դասերով տանջուող մատաղ ըզնները չ'ունենան աղօս ըմբռնումը պարզ աշխարհաբար գրուածքի մ'իմաստին. հոգ չէ թէ անոնք, այդ վերլուծող աշակերտները չ'ընեն երկու տող բան գրել առանց տառախալի: Ետբայինքով գասառութիւնէ զուրկ, ամբողջ ցերեկը ճանճորսութեամբ զբաղող ու գատարկ սպասող, մտցուած ու լըբուած կարգեր. ուսուցիչներու տգեղ վէճեր, ամառ ձմեռ կուտրուած ու փոշմած ապակիէ լուսամուտներ, աղտոտ ու գարշահոտ սրահներ ու դասարաններ, անխոստովանելի վերտառութիւններով սեւագծուած ու անառակ նկարներով միտուած պատեր, դազաղի գանգաղութեամբ պառկող գրասեղաններ, աշակերտներու գայթակղայից վարք, կորաբամակներու, թոքախտաւորներու, վաղահաս ծերերու, կարճատեաներու, ինչպէս ամենքու տխուր երամ մը պատրաստելու նպատակով նստուածք ու կեցուածք. թափուր ըզններու, թունաւորիչ լեզուներու, չորցած ցամքած սրտերու, թոյլերու, վատերու, թշուառներու, յաւակնոտներու, ըստրուկներու, սինքորներու, լեզուազարներու, դատապարտեալ սերունդ մը պատրաստելու ծառայող ազգամիլեա կրթութիւն ու դաստիարակութիւն: Ահա՛ Գալստեան վարժարանին ներկայ վիճակացոյցը . . . :

Այս է մեր սեռածն ու ա՛յս պիտի ըլլայ մեր տեսնելիքը, եթէ շարունակէ իրերու այս խառնաշփոթ ու անկերպարան վիճակը: Ամփոփելով մեր բոլոր գրածները, որոշ կերպով պարզուած կը տեսնենք այս գծապղ. իրականութեան շարժառիթները. Գաղ. ժողով, Հոգաբարձութիւն, Տնօրէն, Ուսուցչական մարմին, ուսանողներու ծնողք ու պարագայք. ահա՛ պատասխանատուները: Յայնազիրը, ահա՛ աղէտը, անմիջապէս վերնալիք պատուհասը: Հիւանդ է

վարժարանը, հիւանդ, գարմանի կը կարօտի ու անյայապ՛ղ դարմանի:

Բայց ի՞նչ է դարմանը, անմիջականը, գործադրելին ու փրկարարը. — անտարակոյս հիմնական փոփոխութիւն արգի գրութեան. զուտ Ազգ. դաստիարակութեան վրայ ձեռած ու Բարեքորին կտակիս նպատակայարմար յայտագիր մ'ուսմանց. ձեռնհաս, լուսամիտ ու անձնուէր հոգաբարձութիւն մը, ու մանաւանդ, կարող, փորձ ու խղճամիտ ուսուցչական մարմին մը:

Ու այս ամենը կը յանձնենք լուրջ ու շաղթութեանն ու նկատառման Պատկ. Բողաքական ժողովոյն, ինչպէս նաև աշակերտներու ակերբուն, որոնք նախանձախնդիր են իրենց դաւակներուն բարեկրթութեան և պարուն, առհասարակ միջնակարգի պահանջները պահանջները պահանջող ու կեանքի պայքարին գէժ անյի հեր կերպով մաքառելու պատրաստող բարոյական ու մտաւորական զարգացմանը:

Կը վերջացնենք մեր տեսութիւնները, խոստանալով յառաջիկային «Նոր Օր»-ի Պատ. ընթերցողները շահագրգռելու մեր երախտներուն ու մեր յափառանքներուն կրթութեանն այնչափ և թերևս աւելի կենսական հարցովը, որ գրեթէ արգաւոր վարիչներուն սրտես աչքերէն: Երախտները պատրաստել Մանկապարտեզով, իսկ շափահանները՝ փրկարարի ու կրտսկերեայ դասընթացներով: Ահա՛ կրթական այժմէութիւնն, որով պիտի զբաղի «Նոր Օր» իր յաջորդ թիւերուն մէջ:

Ի.

ՈՒՍՊԵՐԹՈՒ ՍԱՎԸ

ՈՒՍՊԵՐԹՈՒ Թագաւորին հոգեհանգստեան համար հանգիստուոր պատարագ մատուցին Մուսթի բեկեղեցին, անցեալ հինգշաբթի ժամն առաւօտեան 9/ին:

Իտալական դիւանագիտական գործակալն ու ընդհ. հիւպատոսը Պ. Թուճիկի, համազգեստով, Գործակալութեան ու Հիւպատոսարանին բոլոր անդամներէն չըջապատուած, սոյն դամբանական հանդէսը կը վարէր:

Ն. Բ. Խոթիլին կողմէն ներկայ էր Ն. Վսեմ. Հասան բաշա Ասիմ, մեծ արարողագետը:

Բոլոր դիւանագիտական ու հիւպատոսական մարմինը, Ն. Վսեմ. Պուղոս բաշան ու Գահիրէ գտնուող նախարարները, բրիտանական բանակէն ու եգիպտական բանակէն բազմաթիւ բարձրաստիճան սպաներ, Գահիրէի ոստիկանապետը, շատ մը բարձր անձնաւորութիւններ, իւլէմաներ, կրօնային միաբանութիւններ, զանազան դաւանութիւններէ բարձրաստիճան եկեղեցականներ, ներկայ էին հանգիստին:

Խուռն բազմութիւն մը, որոնց մէջ էին շատ մը տիկնայք, կը լեցնէին եկեղեցին:

Սեղանին առջև կը բարձրանար փռաւոր դագաղ մը, իտալական գրօշակով ծածկուած ու արքայական թագը վրան դրուած:

Պատարագն աւարտեցաւ խորին երկիւզածութեան մը մէջ:

Արձակումը տուաւ Վեր. Հ. Ժէրոմ, Մայր-եկեղեցւոյ աւագ-երէցը, կ'ընդունէր շրջապատուած:

Պարերգունքը երգեցին երաժշտական կտորներ ու կրօնային տաղեր, ի մէջ այլոց Միգիլեթի Մէյի ու Բիէ Ժեզուս, հանրածանօթ ջութակահար Պ. Պրազալէյի մասնակցութեամբ: Պ. Բ. Գլէմէնդէ կ'ընկերակցէր երգիծող:

Այն օրը բոլոր իտալական հաստատութիւնները փակ էին ի նշան սուգի:

Ունկէրթօյի գերեզմանին վրայ դրուելու համար պղծէ թագ մը Հոմո գրկելու նպատակով Աղէքսանդրիա բացուած հանդանակութիւնը 39 անգլ: ոսկիի հասած է:

Թագը Հոմո պիտի զրկուի Սեպտ. 20ին, իտալական գաղթականութեան կողմէն պատգամաւորութեան մը ձեռքով:

ՀեՌԱԳԻՐՆԵՐ. — Ահաւասիկ իտալական շուրջ գետնաներուն և արտասահմանի ներկայացուցիչներուն քաջուած հեռագրին պատճէնը:

«Տխուր պարտականութիւն մը կը կատարեմ ձեզի իմացնելով թէ՛ Ն. Վեհ. Ունկէրթօ թագաւորն երկի իրիկուն մեռաւ ի Մօնձա, զպիւր ոճրի մը զո՛հ: Հաճեցէք հաղորդել այս ցաւալի լուրը... կատարութեան:»

Ն. Վեհ. Վիգթոր Էմմանուէլ Գ. թագաւորը Բիթէա կը գտնուի, ուսկից պիտի վերադառնայ արքայական երկիրը: Վիգթորը Վեհ. Սիլվիոս:

Հոմոյի ֆրանսական զեւսպանը Հանրապետութեան նախագահին հեռագրած էր Ունկէրթօյի դէմ գործուած ոճրին ու անոր մեծաւան գոյթը: Գետնաներին հեռագրին ընդունուած էր էյիզէի մէջ առաւօտ ժամը 3ին:

Գիշերացան սպան, Հիւլիէ հրամանատարը՝ գնաց արթնցնել Հանրապետութեան նախագահը, գոյթը հաղորդելու համար: Պ. Էմիլ Լուպէ աստիկ յուզուեցաւ, շուտ մ'ելաւ ու հեռախօսեց Արտաքին Գործերու նախարար Պ. Տէլլաւաէի: Անմիջապէս ժամը առաւօտեան Յին, նախագահը Հիւլիէ հրամանատարը զրկեց իտալական զեւսպանուանը, յայտնելու համար իր ցաւակցութիւնները կոմս Թօրնիյէլիի իտալական զեւսպանը զեւ յունէր, նախագահին պաշտօնեայէն իմացաւ: Վերջէն ստացաւ իր կառավարութեան հեռագիրը, որ գոյթը կը հաստատէր, ու զեւսպանն եկաւ էյիզէ պաշտօնապէս նախա-

գահին հաղորդելու համար իր Վեհապետին մասը:

Հանրապետութեան նախագահը ցոյց տուաւ զեւսպանին իր ցաւակցական հեռագիրը, զոր անմիջապէս զրկեց Հոմո: Ահա՛ պատճէնը:

«Վեհ. թագաւորն իտալիոյ, Հոմո.

«Ձեր Վեհապետութեան բով թագաւորն կը հանդիսանամ իմ երկրի միաձայն վայրացմանը, ընդգէմ այն զազիր ոճրին որ Իտալիան զրկեց իր վեհանձն Պետէն:

«Կը ինքրեմ Ձեր Վեհապետութեան ընդունիլ իմ բուռն համակրանաց արտայայտութիւնն եւ զնեւ յոտս Ն. Վ. Մարկիբիտա թագուհւոյն իմ յոյժ անկեղծ ցաւակցութեանց յարգալից հաւաստիքը:

ԷՄԻԼ ԼՈՒՊԷ»

Իտալիոյ թագաւորին մահուան առթիւ բուրբ պաշտօնական արարողութիւնք և ընդունելութիւնք օրաձգուած են մինչև ցորտ տնօրինութիւն: Կառավարութիւնը սգապատեր է բոլոր նախարարութեանց ու հանրային հաստատութիւնաց գրօշակները. նոյնը պիտի ընէ թալման յոյզալիստութեան օրը:

Վիգթորիա Թագուհին Օսգորնի մէջ իմացաւ, առաւօտեան ժամը 8էն 9ի առեւանքը, Ունկէրթօ թագաւորին սպանման բովը: Այս վազիր ոճրէն խորապէս յուզուած, իտալիոյ թագուհին հեռագիր մ'ուղղեց ցաւակցութեան և համակրանաց արտային արտայայտութեան մը զեւսպանի:

Կալէսի իշխանը, լսիտ զգածուած, անմիջապէս հեռագրեց, իր ցաւակցութիւնն արտայայտելով իտալիոյ թագուհին ու ժողովուրդը հարուածոյ աղէտին համար:

Լորտ Սալպըրի անձամբ այցելութիւն տրւաւ իտալական զեւսպանին:

Պ. Տիրէնթալ, Կոմս Պուլոյի ներկայացուցիչ և Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութեան պետական քարտուղարը, Ունկէրթօյի սպանման լուրն ստանալէն անմիջապէս յետոյ գնաց իտալական զեւսպանատունը, Արտաքին գործերու պաշտօնէութեան խորին համակրանքը արտայայտելու համար:

Կայսրութեան Լրաբերը (Moniteur de l'Empire) հետեւեալը կը հրատարակէ:

« Իտալիոյ Վեհ. թագաւորը նողկալի ոճրի մը զո՛հ եղաւ, բովանդակ գերման կայսրութեան մէջ, անիշխանականներու մարդախորոշ կողուցին այս նոր ու անուիլ յայտնութիւնը սաստիկ առեւտրութիւն մը ծնաւ ոճրագործին դէմ եւ ամենաշնորհ համակրանք մը զէտ 'ի արք. դերգաստանն ու զէտ 'ի մեր գաշնակից իտալիոյ թագաւորութեան բնակիչները:

Այս ազնիւ Վեհապետին անկարծելի մահը կը զարնէ՛ մեր հայրենիքն ալ, որուն համար ասի մեծ ու ցաւալի կորուստ մ'է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ՅՈՒԾԵՐ

Այն մարդը որ վարժատան մէջ պատկառանք, սուկում ազգած էր ինձ, այժմ պզտիկցած, նսեմացած, ստորկացած էր աչքիս առաջ... ուստի ուղկով հակակրանքս յայտնել, բաւական կծու շեշտով մ'ըսի իրեն.

—Պարո՛ն, ի՛նչ զարմանալի է պատանեկութիւնը... ես զձեզ առաջին անգամ տեսնելուս, պատկառանք մը զգացի սրտիս մէջ, մինչդեռ հիմայ կըզգամ թէ ո՛ր աս տիճան խաբուած եմ եղիր...:

Բարեմիտ ժպիտ մը նշմարուեցաւ խօսակցիս մտայն գէմքին վրայ, հանդարտ ու քնքուշ ձայնով մը հայտնեց.

—Թէ ի՛նչ պէս...:

—Ձեզ կը վայելէ՞ որ այդ նիւսած ու տխուր մարդոց հետ նստիք ելնէք, այդ կոշտ ու կոպիտ անասուններուն հետ կենակցիք...:

Խօսակցիս միւսնոյն ժպտով, միւսնոյն շեշտով խօսքս ընդհատեց.

—Տղա՛ս, ըսաւ թեւս մանկով, դու տակաւին միւսնոյն մանուկն ես, միւսնոյն անգիտակից աշակերտը... ինչո՞վ նախատելի են այն խեղճ ու զրկեալ եղբայրները, որք կարող եմ ըսել թէ՛ հայրութեան բարոյական մտա-

տկարն կը նկատուին, բաղդատմամբ հանրութեան միւս դասակարգներուն...: Այո՛, Պուլոյ մէջ Հայաստանցի հայոց վայելած դարաւոր համբուսին շնորհիւն է որ մենք եւս օտարներէն կը յարգուինք, այսօր ո՛չ թէ միայն հայոց, այլ միջազգային վաճառականութեան, սեղանաւորութեան ու պահպանութեան մէջ գաւառացի պանդուխտներ ճանչցուած են ծայրագոյն վստահութեան բարոյական մտաւայարները. ոչ արքեպոզ են ոչ խաղամուտ, ոչ զոզ, ոչ մարդասպան եւ ոչ ուրիշ անարոյականութեամբ վարակեալ. այդ բարի համբուսին ազգեցութեամբն է որ Եւրոպացիներ ու Ամերիկացիներ յօժարութեամբ համակրած են հայուն, առանց անոր պատմութիւնը գիտնալու...:

« Հայ ու բարոյական բառերը հոմանիչ կը համարին, եւ իրաւամբ կը մտածեն թէ՛ եթէ Հայը՝ որ իւր ստրկութեան ու արհուրածութեան մէջ այսքան վստահելի ու բարի է, արքեպոզ իր անստղիտ ձիրքերով ո՛րքան ընդունակ է լուսաւորութեան և յառաջագիտութեան շուրջին մէջ մտնելու, եթէ վայելէ մտածման, խզճի, պատուոյ և կեանքի ազատութիւնը:

Ու այնպիսի ձայնով մը, որ իւր ներքին այլալուծութիւնը կը մտանէր, մընջեց.

« Մենք այս ամենը հայ հումանիտարուն, զրկեալ ու թախտիկ գաւառացիներուն կը պարտինք...:

Ու վեր առանձինն թողլով, կամացուկ մը հեռացաւ...:

Ո՛հ, ո՛րքան զվճարեց վայն վիբաւորելուս համար... ո՛րքան իմաստալից էին իւր խօսքերը մանաւանդ վեր-

Վեհ. թագաւոր-Կայսրը՝ յանձին արքայական զոհին կ'ողբայ հաւատարիմ եւ անմոռանալի բարեկամ մը. իսկ իտալական ազգին հետ, բովանդակ գերմանական ժողովուրդը՝ այնքան սիրելեալ այս ասպետական Թագաւորին դագաղին շուրջը վշտով համակուած, սրտացին համակրանք մը կ'զգայ որդւոյն համար որ Գահին վրայ պիտի յաջորդէ անոր:

ՄեՌԵԼԱԿԻՐ ԿՍՌԻՐԸ. — Ունկէրթօյի հոյակապ նշխարը կը ելուր սահմանեալ կառքը՝ ճարլ Ալպէր ու Վիգթոր Էմմանուէլը կրող միւսնոյն կառքն է, որ շինուած է Թուրինի մէջ, Սալուայի Տան արարողապետ ձէնովէզէ մարքիզին հրամանով: Կառքը պիտի քաջեն սեւաքող ութ ձիեր, զորս պիտի վարեն Արքունեաց սգազգեցիկ ձիապանները:

Կառքին մէջ, ըսրձի մը վրայ պիտի դրուին Օգոստ. Մեռելի արքայական շքանշանները:

Մածկոցին երկիւնքը պիտի բռնեն Աւետման (Annonciation) մեծաւորներն և պետական բարձրագոյն աստիճանաւորները:

ԳԱՀԻՐԷԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՎՈՐԸ. — Հինգշաբթի առաւօտուն Մուսքիի եկեղեցւոյն մէջ Ունկէրթօյի հոյեհանգստեան պաշտօնը կատարուելով՝ պաշտօնական արարողութիւնները աւարտուելէ յետոյ, նոյն օրը, իրիկուան ժամը հինգ ու կէսին, մայրաքաղաքիս իտալական գաղթականութեան անդամները «Շէփրա Օթէլ»-ի ետին շինուած իտալական ազգիկ վարժարանին քովքը խոնած, անկէց թափօր կաղմեցին երթալու Հիւպատոսարանը, իրենց պատգամաւորներուն բերնօքն արտայայտելու Պ. Թուճինի՛ իրենց մասնակցութիւնը Մայր-Հայրենեաց ու արք. գերդպտանին սուգին: Որոշեալ ժամուս, թափօրը սկսաւ շարժիլ հետեւեալ կարգով.

Եգիպտական ոստիկանութեան գործակալները հեճեալ:

Պոզգէզիի նուագածուաց խումբը.

Իւսապի ազգիկաց արքայական վարժարանները.

Մանչերու արքայական վարժարանները.

Լէճնարտ աէ Վինչի վարժարանները.

Գաղթականութեան տիկիները.

Իտալացի գատաւորները.

Ռէտուչի Բ. Պ. ընկերութիւնը.

Գործաւորաց ընկերութիւնը.

Բարեգործական ընկերութիւնը.

Իտալական Որմնագիրները (Loges Maçoniques):

Իտալական Մամուլը.

Ռիզօթթօ ընկերութիւնը.

Գործաւորաց Գլիսպը (cercle).

Թատերասէր ընկերութիւնը.

Ղին պարբերութիւնները. ևս ետքէն, շա՛տ ետքն միայն զգացի զայդ...:

Ալ ամեն օր պարբերաբար կ'այցելէի այն վայրը՝ որ ինձ տաճար մը կը թուէր. ըստ կարեացու կը դասախօսէի, կը սիրաշահէի, կը միտնէի այն սրբանքը, որ ինձ բողոքովն անձանօթ կրակով օր քան զօր կը հրահարուէին:

Արքեպոզ ո՛րքան ճիգ կը թափէին զսպելու համար իրենց գէմքերուն սրտնեղութեան նշանները, հանգչելով անգիտակից ու յաւակնոտ բանախօսութիւններու:

Ես այդ կեանքովն համակուած, այլ եւս մոռցած էի իմ հաճոյքի ու վայելքի ընկերներս, այլ եւս զաղքած էի այցելելէ այն հմայիչ զբօսավայրերն՝ որք երիտասարդութեան շիրմին կից, շատ կից հաստատուած են:

Բանիցս ընկերներէ ընդունած էի այն տխուր նախատիքը, զորս ասուն մ'ալ ես՝ ըրած էի բարեբարիտ Այո՛, բարեբարս կը կոչուի գոյն, զի նա դրաւ սրտիս մէջ իմ իբր հայ անհատ ունեցած սրբազան պարտականութեանցս պիտակցութեան հիմը...:

Օր մը, ըստ սովորութեան, նոր բարեկամացս, այցելուութեան զացած պահուս՝ տակաւին փողոցը չմտած՝ անձանօթ մէկը ճամբաս արգելեց...:

Ականջիս ըսած մի քանի խօսքերէն իմացայ թէ բարեբարս ու իւր բովանդակ աշակերտները կեղերական բանսը կը գտնուէին այն միջոցին:

Այդ անգութ յայտնութիւնն երկայնի վաշտի մը պէս խոցեց սիրտս, ուզեցի պատճառն իմանալ, բայց խօսակիցս ցուցամասը խորհրդաւոր կերպով մը չբխեցը տանելէն վերջ՝ իսկոյն անհետացաւ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ը

Տանթէ Ալիկիյերի ընկերութիւնը. 1էկա նավակէ. Իտալական Գաղթականութիւնը. Իտալական պաշտպանեալ հպատակները. Ոստիկանները կը փակէին երկու կողմէն գնացքը. ամեն մէկ ընկերութիւն ունէր իր գրօշակագրատ. թափօրէն կարգապահութեանը կը հսկէին հիանալի կերպով գոմիւհները, ձախ թեւերին իտալական գոյներէ շղարշով մը պատած. ասոնց գլուխը կը տեսնուէր Մօսքա փաստարանը, ցոյցին կազմակերպիչը և Պրանտանի երկրաչափը:

«Պանտա Պօղգէզի»-ի դամբանական սրտաշարժ նուագածութիւնը խորին տպաւորութիւն մը թողոց անգլիան բաղմութեան վրայ, որ թափօրը կը շրջապատէր:

Իտալական դիւանադիտական գործակալութեան շէնքին առջև կանգ առաւ թափօրը: Պ. Թուճիկի գործակալութեան ու հիւպատոսարանի բոլոր պաշտօնեաներովը շրջապատուած. ընդունեց զանազան ընկերութեանց պատուիրակները:

Այնուհետև թափօրը սկսաւ կարգաւ դառնալ անցնել Ումպէրթօ թագաւորին մեծագիր պատկերին առջևէն, որ Ն. Վեհափառութեան անձնական նուէրն էր Պ. Թուճիկի մինչդեռ Պօղգէզիին խումբը կը նուագէր արքայական երգը: Հօն, Պ. Թուճիկի խօսեցաւ յուզիչ ճառ մը, որուն աւարաման տեղի ունեցաւ աւելի յուզիչ տեսարան մը: Նորին Վեսմ. Ապագէ բաշան, Գահիրէի Իտալական գաղթականութեան երկրչափը, արտասուածք աչքերով փարեցաւ Մինիստրին վզին և շնորհակալութիւն յայտնեց անոր՝ ամբողջ Իտալական գաղթականութեան անունով: Ժամը 7ին ամեն բան վերջացած էր, կատարեալ հանգարտութեամբ ու կարգապահութեամբ:

Հօս գիտողութիւն մը: Ինչպէս տեսանք, թափօրը կազմակերպուած էր Իտալական Գաղթականութեան կողմէն և ունէր զուտ իտալական ազգային հանգամանք. հետեւաբար, որ և է օտարազգի անհատի մը մասնակցութիւնը ծիծաղաշարժ ու անտեղի էր: Սակայն, կ'երեւի թէ թափօրին դամբանական տիրութիւնը զուարթութեան փոխելու բարի միտումով մը հօն փայլել ուզած էր մեզի ծանօթ հայ փաստաբան մը որ — թէ և անոնց դրօշակի — իր գրականաբան քերթով ու իր բարձր աչքերուն վրայ դրուած ակնոցով կ'ընծայէր եզակի երեւոյթ մը հիացած ամբոխին:

Իսկ եթէ կը փափագէր ինքզինք ցոյց տալու — թէ և չուենար որեւէ պաշտօնական հանգամանք մը — կրնար երթալ իբր պարզ անհատ մը խառնուել միջազգային պաշտօնական արարողութեան մէջ, որ տեղի ունեցաւ նոյն օրն առաւօտուն Մուսթի եկեղեցին:

Այլ ևս աշխարհիս վրայ ինքզինքս առանձինս կը կարծէի:

Այժմ լաւ կ'ըմբռնէի ամեն ինչ, իմ սիրտս ևս սկսած էր արծարծել այն անշնչ կրակը... այժմ կ'զգամ թէ, տակաւին անգիտակից, սարուկ ու բռնազատեալ իրոււունքներով ապրող անհատ մ'էի. լաւ ըմբռնած էի թէ իմ բաղձանքս — հայոց սարկուծեան անտանելի լուծին թօթափումը — ինչ միջոցներով կարելի էր ձեռք բերել, գիտէի թէ՛ լուկ այն սուրբ կրակը կարող էր հալեցնել հայը կաշկանդող ամբակուռ շղթան:

Այն ատեն յիշեցի թէ ինչպէս բարերարս մի օր ընդ երկար բացատրած էր ինձ այն ամեն միջոցները, որք հնարաւոր էին հայթայթել մեր մէջ, որոցմով միմիայն կարելի էր հրապարակ նետուել ու ճանչցուել ազատութեան ու բարօրութեան արժանի ազգ մը, ժողովուրդ մը:

Կը յիշէի թէ նա ամեն միջոցներուն կը գերազանցէր հայ լրագրողութիւնը. «Ներկայիս մէջ սա՛ այն միակ միջոցն է, որ ծագում կուտայ ներդաշնակ ու գիտակից գաղափարներու, առանց որոյ չէ կարելի ձեռք բերել համերաշխութիւն ու միութիւն, սրտերն ու մտքերը կ'ազնուանան, իմ կը ձուլուին, ու այդ պէս հաւաքական մի ուժով զօրացած՝ գիւրաւ սեղի չեն տար արտաքին թշնամիին յարձակումներուն...»

Իսկ խօսելով ապագայի մասին, արամազին գլուխն եր'րցնելով կը գոչէր:

«Ապագան ինձ շատ մութ կ'երեւնայ... ժողովուրդը դեռ շատ խակ ու ազգայն է, երկար, շատ երկար ժամանակի կարօտ է զնա գիտակցութեան ու օգտակա-

կ'երթայ, տես՛ք, մի՛ հարցնէ՛ք ո՛ւր կ'երթայ, կ'անցնի, շուրջի խըրըտու՛մը չը գիտեր, Ամեն քայլին կը գընէ սեւ, մութ կէտեր, Բանաստեղծ մ'է, գիտէ՛ք, դայ:

Ժխորը կ'ատէ, լըռութիւնը կը կարգայ, Իր աշխարհէն դուրս ուրիշ բան չը ճանչնար, Իսկ աշխարհը կարծէ զանի խելագար, Բանաստեղծ մ'է, գիտէ՛ք, դայ:

Կայք մը չունի, Բաղդին վըրայ կը խընդայ, Շողին, բոյրին, ըստուերին ու կոնակին Հարցեր կ'ուղչէ ու կըսպասէ անձկագին, Բանաստեղծ մ'է, գիտէ՛ք, դայ:

Մարդիկ զանի կ'անարգեն, ինք կը գըթայ, Զրկեալներուն բազմը կ'երգէ մորմոքով, Ողբը կ'ողբայ որբին, այրի մօր մը քով, Բանաստեղծ մ'է, գիտէ՛ք, դայ:

Կիրքերէ վեր, սողունները կը կոխէ, Մարմնազուճն է տառապանքին իր ազգին, Անոր ուխտած է զոնկ կեանքն ու ոսկին, Գիտէ՛ք դա մի քերթող է:

Մարգարէ մ'է ան, պատգամներ կ'որոտայ, Դարուն ծընուեց, բայց դարուն հետ չը մեռնիր, Վըսեմ կոյր մ'է ան, կը տեսնէ ամեն իր, Բանաստեղծ մ'է, գիտէ՛ք, դայ:

Բանաստեղծ մ'է, այո՛, կ'երթայ ու կ'երթայ, Ճամբան փըշուտ հիւանդանոց կը սանի Կամ կախաղան, մինչև զուր տապանի, Բանաստեղծ մ'է, գիտէ՛ք, դայ:

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր Ն Ե Ր

ԼՈՆՏՐՍ, 9 Օգոստ. — Բէյձանկ Օգոստ. 5 ի ճակատամարտին Ռուսերը զո՛հ տուին 500 մարդ, Անգլիացիք 50. Գերմանացիք ու ճարտնիք ալ մեծ կորուստներ ունեցան, Դաշնակիցները կը յառաձանան դէպ ՚ի Եանկ-Չունկ:

ՀՌՈՄ 9 Օգոստ. — Ումպէրթօ թագաւորը մեծ հանգիստով թաղուեցաւ Բանթէն: Արկայի զուբը ներկայ էր Ն. Բրիտ. Վեհափառութեան կողմէն:

Ս. ԲէթրՍՊՈՒՐԿ 9 Օգոստ. — Ռուսերը Չինեալուն փայտուն և կրկնակի պարտութիւններ կրել տուին Ամուրի նահանգին մէջ: Գերի ատին զօրավար մը և շատ մ'սպաներ:

ԼՈՆՏՐՍ, 9 Օգոստ. — Լորտ Մէթուըն, միացնելով իր ուժերը Լորտ Գիշնէրի զօրքերուն, յարձակելով զար-

րութեան շաւղին մէջ բերել, ապագա՛ն նորածիններուն կամ ներկայ գաղտնիքու գրասեղաններուն առջև դազափարով ու մարմնով մաշուողներուն է, եթէ ներկայ հանրութիւնն համերաշխութեամբ ու ողջմտութեամբ արտաքին թշնամիին դէմ զօրանալէ վերջ՝ բոլոր ճիգն իմի ամբիտուած՝ նոր սերունդին մտաւորականն ու բարոյականն բարձրացնելու աշխատի ու ինչպէս նաեւ մերը, կը մըմնջէր այն պիտի բեկեալ ձայնով մը՝ որ կը մատնէր թէ՛ այդ կէտն էր միակ վիշտը...»

Նա այն ժամանակէն ճշգրիտ կերպով գուշակած էր ինչ որ մինչ ցայժմ կատարուած է. Թըքին պարբերական կոտորածները, Եւրոպայի սառնութիւնը, կուսակցութեանց պատակաւորութիւնն ու բաժանումները, հայ Յեղափոխութեան ապագայ վախճանը... վերջապէս Թրանսվալի ու Չինի պատերազմները... Եւ սիրահարած էի իրեն, կ'զգայի թէ այդ մարդը գերի վերոյ էր այն անձերէն որք նոյն ժամանակուան (մինչև իսկ այժմու) հանրային կենաց առաջնորդին մէջ կը վիտային...:

Բայց զարմանալի պարագայ մը...: Հանրութիւնը, բացի զայն մտաւորապէս ճանչցողներէն, կը կասկածէր, կը խճճէր, կ'անարգէր, կը զրպարտէր, և վերջապէս այն աստիճան անով զբաղեցաւ մինչև որ նորա մատուցուած ու բանտարկուելուն ալ պատճառ դարձաւ:

Երբ իրեն անգամ մը հարցուցի այդ հակառակութեանց ու յարձակմանց պատճառը, նա միշտ իր բարեմիտ ժպտովն ու փայփայիչ շեշտովը պատասխանեց.

Կաւ. Տը Ուէգի բանակին մէկ մասը Վանդրաքուռնի չրջակայքը, Օգոստ. 7 ին:

Պ. Կուսնու. կ'իմացնէ թէ տնգլիական մեծաթիւ ջուկատ մը ցամաք կ'լաւ. Շանկ-Հայ: Վաճառականները կը վախնան որ ասոնց ներկայութիւնը զրգուէ Չինեալ:

ՎԱՇՆԻԿԻՐՆ 9 Օգոստ. — Զօրավար Շէֆֆի կը հեռագրէ թէ՛ դաշնակից զօրազնիքը գրաւեցին Եանկ-Չուն Օգոստ. 6 ին: Ամերիկացիներն ունեցան 60 մարդու կորուստ:

Վ Ր Ի Պ Ա Կ

Որբերու Հոգատար և Վասպուրականի Որբախնամ ընկ. Գործ. Ժողովներուն կողմէն կազմակերպուած վեճականութեան բացման առթիւ «Առաջնորդական Փոխ-Տեղապահ» գրուած է փոխանակ «Առաջնորդարանի ներկայացուցիչ» գրուելու:

Լ Ր Ա Ք Ա Ղ

«Մարտ»ի մէջ կը կարգանք. ԵՂԵՌՆԱԻՈՐԻ ՄԸ ՍԱՏԱԿՈՒՄԸ. — Կ. Պոլսէն կը հաղորդուի թէ Բերայի կառավարիչ Էնվէր պէյ ստակեր է: Այս եղեռնաւորը բաւական ատեն է Վեր շաքարախտէ կը տառապէր. հիւանդութիւնը վերջերս սասակացած ըլլալով տունը քաշուած էր. դժուար ու երկարատեւ ողբերգութեամբ մը լինցած էր:

Այս հրէշին անունը կցուած է հայկական ջարդերու ողբերգութեան: Հետեւեալ գրուագը բաւական է պարզելու համար այդ գաղանին վայրագ և ցած ոգին:

Օգոստոս 15/26ին, Պանք Օթոմանի դէպքին օրը, 350էն աւելի հայ բռնուելով բանտարկուած էին Բերա Ղալաթա-Սարայը: Էնվէր պանտը ամէնքն ալ կրնար անմիջապէս սպաննել տալ: Բայց կը ուզասէ որ մինչև նամակին ժամը հնչէ: Ու այդ պահուն էր, երբ տարածար կը մտնէր, որ Էնվէր սեճեաթին գետնը տարածելով մինչ ինք մէկ կողմէն ողջակէզին ազօթք կը կատարէր Մուհամմէտի, միւս կողմէն ալ Հայոց զուլաները մէկիկ մէկիկ կացինի հարուածներու տակ կոտորուել կուտար. ու քաղաքապետութեան չեօփի կատքերը շեշտանց մարտիրոսներուն գիակները կը տանէին ծովը կը նետէին: Դեպքանատուներու պատկանող անձեր շարափներ ետքը այս ոճրագործութեան հետքերը դեռ կը գտնէին կալաթա Սէրայի մէջ. կարելի չէր եղած արեւի բիծերը բոլորովին ջնջել:

Բայց անա այդ 350 Հայոց արեւին մղձաւանջը կը ճնշուի եղեռնագործին կուրծքին վրայ ետ յուսահատ կրկններ կը մղէ մահուան դէմ: Այդ սառնակի օրերուն մէջ Էնվէր «Հայ մը, Հայ մը» կը պոռայ, ու քանի մը անգամներ իր անկողնին զուլը բերել կուտայ քանի մը հայեր, որոնց հետ յարաբերութիւն ունի եղեր: Կը խօսի անոնց իր պաշտօնավարութեան միջոցին «Հայոց վայրած բարիքներուն վրայ» և կը պատմէ իր նախորդներուն օրով անոնց կրած հալածանքը:

Կը յուսար թէ թէ հայու բերնէն իր գործերուն շատագուրութիւն մը եթէ լսէր, անոր մէջ իր ոճրին

«Վրոյ՛ր, անպտուղ ծառիմը քար չե՛ն նետեր, կեղծ գործիչը, որպէս զի իւր լարած դաւերը չը կրահուին, միշտ չը շահալուծեամբ ու զգուշութեամբ կը գործէ, որպէս զի տակաւին անգիտակից ու տղայ հանրութեան խճճմանքներուն կամ շար լեզուին չ'մատուցին, իսկ անկեղծօրէն հանրային շահերուն նուիրուող միմիայն շատագուրով խղճին կատարեալ հանդարտութեամբ, ազատ ասպարէզ կը թողու ժողովրդին տղիտութեան բերումը ծագումն առնելով խճճմանքներուն... այժմ անշուշտ կ'զգաս թէ ինչպէս պատճառը՝ որ միշտ անկեղծ գործիչ մը՝ ամենէն կ'արհամարուի, կը լքուի... ու միշտ գլուխը արամազին երերցնելով... տակաւին գիտակցութիւնը բաւարար կերպիւ մուտ չէ գտած մեր մէջ. կատարեալ սղէսներ՝ ենք, սղէ՛տ...»

Կը յիշեմ թէ՛ ո՛րքան կտորուկ բայց իմաստալից կերպով խրատած էր մի օր զիս, երբ շրջանար մը մէջքս դրած՝ իրեն ցոյց տուածէի յոխորտանքը, բնելով:

—Ս'ս է որ պիտի ալատէ զմեզ... այն է այն խաչը որու պարտին երկրպագել այն ամեն ստորուկ ու գերեալ ժողովուրդները, որք կը բաղձան իրենց գերութեան շղթան խորտակել...:

Իմ խօսքերս դառն տպաւորութիւն մ'էին թողած խօսակցիս վրայ:

(Շարունակելի)

